

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 51/2

27 նոյեմբերի 2012թ.

Քննարկվեց Արեքնազ Բարեյանի 17.11.2012թ. դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30.10.2012թ. հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410891 վարչական ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՕՀՎ 20-րդ բաժնի աշխատակիցները 30.10.2012թ-ին կազմել են թիվ 1410891 արձանագրությունը, որում մասնավերապես նշվել է.

սույն թվականի հոկտեմբերի 23-ին կատարեցի արտաքին դիտում Արարտի մարզի Վեդի քաղաքի Արարատյան 10 տան բնակիչ Արսեն Վազգենի Բարեյանի կողմից իրականացվող մանրածախ առևտրով զբաղվելու փաստը ճշտելու համար, որն իրականացնում էր ք.Վեդիում գտնվող ավագ դպրոցի բուֆետում: Պարզվեց, որ Արսեն Վազգենի Բարեյանը իրականում զբաղվում է նշված գործունեությամբ սույն թվականի հոկտեմբեր ամսից՝ շուրջ մեկ շաբաթ: Արսեն Վազգենի Բարեյանի մոտ կատարեցի նաև իրերի և փաստաթղթերի հետազոտում: Պարզվեց, որ Արսեն Վազգենի Բարեյանը չի ունեցել պետական գրանցում մանրածախ առևտրով զբաղվելու համար: Օպերատիվ հարցման արդյունքում ստացա համապատասխան հայտարարություն Արարատի մարզի Վեդի քաղաքի բնակիչ Գոհար Համբարձումյանից, որն աշխատում է վերը նշված ավագ դպրոցում որպես կազմակերպիչ: Վերջինս հայտնեց, որ իր ունեցած տեղեկություններով Արսեն Բարեյանը դպրոցի բուֆետում իրականացնում է առևտուր շուրջ մեկ շաբաթ: Սույն խախտումն առաջացնում է պատասխանատվություն ՀՀ հարկերի մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն 200.000 դրամ և <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն 60.000 դրամ սոցիալական վճար, ընդամենը՝ 260.000 դրամ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի 24.10.12թ-ի թիվ 347-20 որոշումը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 20-րդ բաժնի պետը 30.10.2012-ին ընդունել է հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410891 վարչական ակտը, որով ղեկավարվելով <Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի և <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով, լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 260.000 դրամ:

Արեգնազ Բարեյանի գանգատում մասնավորապես նշված է.

սկսած 14.04.2008թ-ից զբաղվում եմ մանրածախ առևտրով, ունեմ համապատասխան անհատ ձեռներեցի վկայական և հարկային մարմինների հետ որևէ կոնֆլիկտ մինչ օրս չեմ ունեցել:

Ս.թ. հոկտեմբերի 12-ից սկսել էի աշխատել Վեդի քաղաքի ավագ դպրոցի բուֆետում: Հոկտեմբերի 17-ին, երբ հերթական դասը սկսվել էր, ես ամուսնում՝ Արսեն Բարեյանի հետ գտնվում էինք բուֆետում: Վերջինս եկել էր, որ իրար հետ տուն գնանք: Այդ պահին ներս մտան ՕՀՎ աշխատակիցները: Կարգի համաձայն պատին կայցված էր Ա/Ձ-ի վկայականի կրկնօրինակը և հարկ վճարողի հայտարարությունը՝ հարկային կողը: Սակայն նրանք պատից պոկեցին ասելով, որ դրանք իրենց պետք չեն: Նրանց պահանջով հաշվեցի դրամարկղի գումարը, որն այդ պահին կազմում էր 6000 դրամ: Դրանից հետո նրանք ինձ առաջարկեցին, որ բացատրություն գրեմ, սակայն քիչ անց ասացին, որ ակտը պետք է գրվի ամուսնուս անունով: Սկզբում ամուսինս հրաժարվեց ասելով, որ ինքը կապ չունի իմ առևտրի հետ և, որ ինքն ընդամենը եկել է ինձ տուն տանելու համար: Սակայն ՕՀՎ աշխատակիցներն ասեցին,

որ եթե ակտն իմ անունով լինի, ակտի գումարը մեծ կլինի: Մինչև հիմա ինձ համար անհասկանալի է, թե ինչու էին տրամադրված ամուսնուս անունով ակտ գրելու:

Ինչ վերաբերում նրան, որ Գոհար Համբարձումյանը տվել է հայտարարություն, որ ամուսինս մեկ շաբաթ աշխատել է, ապա նշված հայտարարությունը գրվել է ՕՀՎ աշխատակիցների պահանջով և թելադրանքով:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ ընտանիքը գտնվում է ֆինանսական ծանր վիճակում, Արեգնազ Բարեյանը խնդրում է հարցին տալ արդարացի լուծում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Արսեն Բարեյանի և 30.10.2012թ. թիվ 1410891 արձանագրությունը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ դիմում-գանգատը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2012 թվականի հունվարի 30-ի թիվ 22-Ա հարամանով հաստատվել է Հարկային մարմնի օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում օրենքով նախատեսված պատասխանատվության կիրառման և հարկային պարտավորությունների առաջադրման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի 9-րդ կետի համաձայն. <ՕՀՄ արդյունքում ապօրինի գործունեության իրականացման փաստ հայտնաբերվելու և հիմնավորվելու դեպքում ՕՀՎ աշխատակցի (աշխատակիցների) կողմից կազմվում է սույն հրամանի N5 հավելվածով հաստատված ձևով արձանագրություն (երկու օրինակից)>:

Ընթացակարգի 11-րդ կետի համաձայն. <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան հարուցված վարչական վարույթ իրականացնող պաշտոնատար անձը՝ ՕՀՎ պետը, ՕՀՎ պետի հանձնարարությամբ պետի տեղակալը կամ ՕՀՎ բաժնի պետը (այսուհետ՝ պաշտոնատար անձ) վարչական վարույթի հարուցմանը (սույն ընթացակարգով նախատեսված արձանագրության կազմմանը) հաջորդող երեք օրվա ընթացքում սույն հրամանի N6 հավելվածով հաստատված օրինակելի ձևով պատշաճ ծանուցում է (կցելով արձանագրությունը) վարչական ակտի հասցեատիրոջը և իրավախախտման փաստի արձանագրմանն առնչվող անձանց (փոխադրող, վարորդ, առաքիչ և այլ) լսումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին>:

Քննարկվող դեպքում վարչական վարույթը հարուցվել է՝ արձանագրությունը կազմվել է 30.10.2012թ-ին, հետևապես Ընթացակարգի 11-րդ կետով նախատեսված ծանուցումը պետք է կատարվեր արձանագրությունը կազմելուն հաջորդող երեք օրվա ընթացքում: Սակայն, ծանուցումը կատարվել է (ծանուցումը Ա.Բարեյանին հանձնվել է) մինչև արձանագրության կազմելը՝ 26.10.2012թ-ին: Այսինք, խախտվել է Ընթացակարգի 11-րդ կետի, ինչպես նաև <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Քննարկման ընթացքում պարզվեց նաև, որ Ա/Ձ Արեգնազ Բարեյանի (որը հանդիսանում է Արսեն Բարեյանի ամուսինը) և Վեդի քաղաքի թիվ 3 ավագ դպրոցի տնօրենի միջև 01.10.2012թ-ին կնքվել է թույլտվության պայմանագիր, որով Ա/Ձ Արեգնազ Բարեյանին թույլատրվել է Վեդի քաղաքի թիվ 3 ավագ դպրոցի 20 քմ տարածքում աշխատեցնել բուժետ աշակերտներին սնունդ վաճառելու համար: Այսինքն, Վեդի քաղաքի թիվ 3 ավագ դպրոցում բուժետի կազմակերպման իրավունքը վերապահված է Ա/Ձ Արեգնազ Բարեյանին, որը սահմանված կարգով հաշվառված է հարկային մարմնում և փաստացի իրականացրել է հիշատակված գործունեությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն. <Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է>:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում, ըստ էության, չի հիմնավորվել Արսեն Բարեյանի կողմից ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով դիմում-գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Յ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30.10.2012թ. հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410891 վարչական ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ